№ 184 ՏԱՐԵԴԱՐՁԱԿՉՈՒԹԻՒՆ ՏԱՐԻ Հ. ԱՐՈՒՍՏԱՄԵԱՆ 14 Հոկտեմբեր Հ. Արուստամեան 14 Հոկտեմբեր 1895 ՏԱՐԵԴԱՐՁԱԿՉՈՒԹԻՒՆ ՏԱՐԻ № 184

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Տարին 10 ռուբլի, կէս տարուայ 6 ռուբլի, երեք ամսուայ 3 ր. 50 կ.
ամսոյր 1 ր., հատուկ 5 կ.
Բոլոր տեղեր եւ մասնաւորներ իրենց պահանջները պիտի ուղղեն միայն հետեւեալ հասցէով:
Տպագրութեան հասցէն՝ Редакція «Нор-Дары». Адресъ Типографіи
Տիկին Redaction «Nor-Dar».
Յայտարարութիւնները կ՚առնուին Ռ. Ռոզենթալի գրատունէն Ա. Ա. Ռոզենթալ, Ա. Ա. Ռոզենթալ, Ա. Ա. Ռոզենթալ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

(Հրատ. Պետ. Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան)

Ամսագիրը կը հրատարակուի ամէն ամսուն 10 էջերէ։

Ամսական բաժանորդագինը Թուրքիոյ համար 10 ղուրուշ, Եւրոպայի համար 10 ֆրանք։

Ամսագրին գրութիւնները կը ղրկուին Վենետիկ, Սան Լազարօ

ՀԱՅԿԱԶԺ

Ս. Լեզովեցի տող առաջ եկավ.—

Թարմատիպ հոդվածը հետաքրքրական է մանավանդ նրանով, որ հեղինակը ցույց է տալիս Ֆրանսիայի ներկայ դրության պատճառները։ Ֆրանսիայի ներկայ դրության պատճառները հեղինակը գտնում է նրա ներկայ կառավարության մեջ։ Ֆրանսիայի ներկայ կառավարությունը, ասում է հեղինակը, ոչ մի կերպ չի կարող գոհացնել ֆրանսիական ազգին, որովհետև նա ոչ մի կերպ չի կարող գոհացնել ֆրանսիական ազգի ամենամեծ մասը, այսինքն՝ բանվորությունը։ Ֆրանսիայի ներկայ կառավարությունը, ասում է հեղինակը,

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱԳԻՑ
(«Նոր-Դար»-ի Թղթակցից)

ՊԱՐԻԶ, 15 հոկտ. (ն. տ.)։ Ֆրանսիական լրագրութիւնը այս անգամ իւր սովորական լուութիւնը խզեց և ամեն օր բոլոր գոյների թերթերը չեն դադարում թէ ու դէմ յօդուածներ նուիրելուց հայերին, հայկական խնդրին և Պոլսի վերջին դէպքերին։ Բոլոր թերթերը, գրեթէ առանց բացառութեան, խորհուրդ են տալիս սուլթանին չուտպել մի բաւարար լուծում տալ, որովհետև հայկական խնդիրը ոչ միայն կարող է մեծ վտանգ սպառնալ Օսմանեան կայսերութեան գոյութեան, այլ ամբողջ Եւրոպան կրակի մէջ կը դնէ։

Լրագրների այս նոր սրչաւանքից ընդօտանելով, այստեղի դեսպանատունը մի փոքրիկ մասնաժողովի նման բան կազմից, որի պարտաւորութիւնը եղաւ բոլոր խմբագրատների մէջ մանել և օսմանեան անմեղութիւնը ցոյց տալ։ Ոմանք իրեն ատորացրից այդ ոսկինները վեր առնել։

Հանրի Ռոչֆորը դարձի գալուս է անցած և սկսել է մի խիստ պայքար մղել Թուրքերի դէմ։ Բաւական է ասել, որ երբ Ռոչֆորը Անգլիայից վերադարձաւ, նրան ընդ առաջ գնաց մէկ միլիոնից աւելի ժողովուրդ։ Ինքը ոչ միայն դիրք ունի, այլ և ազդեցիկ չրջան և ընթերցողների մեծ քանակութիւն։ Նրա յօդուածները, որ ուղարկել եմ ձեզ *) մեծ աղմուկ հանեցին Ֆրանսիայում և սպառած ազդեցութիւնն ունեցան այստեղի հասարակական կարծիքի վրայ։ Նա բազմաթիւ նամակներ է ստացել թէ կ. Պոլսից և թէ Պարիզից իւր այդ յօդուածների համար։

Մեւս կողմից «La Lanterne» նոր արշաւանք պիտի բանայ Թուրքերի դէմ։ «Lanterne» նոյնպէս արմատական է։

Տասից աւելի լրագրապատներ դիմել են հայ ուսանողների հայրենասիրաց ընկերութեան մասնաժողովին և նիւթ են խնդրել։ Այդ նիւթերն արդէն մատակարարում են։ Ի թիւս այլոց որոշուած է թարգմանել «Նոր-Դար»-ի մէջ եղած խմբագրականները և բանասիրական բաժնում հրատարակուած «Թիֆլիսի բանաը»։ Թարգմանւում է նոյնպէս և Դիլլոնի «Հայաստանի դրութիւնը»։

Առ այժմ մէջ եղած պատգամաւորները (député) որոշել են հարցապնդում ուղղել կառավարութեան։ Ցաւալի է հայոց խօսողների մէջ ամեն կուսակցութիւններից դէթ մի մի հոգի պիտի լինի, որպէսզի խնդիրը կուսակցութեան պայքար չդառնայ։

Մոռացայ յիշել, որ Թիւրքիայի դեսպանատան ջանքերը մասամբ իւիք պատուեցան, որովհետև այստեղի փողոցային թերթերից մէկը գրեց. «Անիծենք հայերին և նրանց պաշտպան անգլիացիներին. եթէ հայերը իշխանութիւն ունենան, մեր ասիական ազդեցութիւնը կոչնչացնեն»։

Մի այլ թերթ ամենայն լրջութեամբ առում է. «Հայերը առանց բացառութեան գող, աւազակ և մարդասպաններ են։ Հայերը տարեկան միքանի տասնեակ քուրդի երեխաներ են յափշտակում և իրենց վանքերի մէջ քրիստոնեայ դարձնում զօրով... մինչդեռ քուրդ մայրը, հայրը դրան առաջ լալիս, արտասուում են...»։ Եւ աւելացնում է, որ ինքը, յօդուածագիրը, «շատ բեռնէ է մի չանի ղէպ»։ ուսաի եթէ հայերը իշխանութիւն ունենան, մեր ասիական ազդեցութիւնը կոչնչացնեն և, բնականաբար, խնդրում է ֆրանսիական կառավարութիւնից, որ չաչխատէ հայերին այդպիսի միջոց տալու։

Մի քանի թերթեր էլ ասում են, որ հայերը վառ երեւակայութեան տէր են, նրանք չպիտի բաւականան ինքնավարութիւն, իշխանութիւն, թագաւորութիւն ունենալով, այլ չատ մեծ բան պիտի ուզեն։ Դրանց նախահայրերը աչք էին դրել Հռովմի, Աթէնքի վրայ, ինչ կանեն դրանք այժմ...»։

Դեռևս տղան չէ ծնած և կնատնեղի ջոկերը այդ ծնունդից տղայի ուրուականից սարսափում են։ Բայց գուշ չեն սխալւում, մվ գիտէ...

Ս. Սապահ-Գիւլեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Բելգիոյից «Նով. Վր.»-ին հեռագրում են.—Այն առթիւ, որ սուլթանը, հաստատել է Փոքր Ասիայի ռեֆորմների ծրագիրը, լրագիրները կարծիք են յայտնում, թէ եւրոպական Արեւելքում ճշդնաժամը դեռ ևս չի կարելի վերջնականապէս անցած համարել, թէ պէտք է սպասել, որ Թրքական մոլեռանդութեան նոր պայթումն կըլինի։ Մամուլը Անգլիային և Ռուսիային խորհուրդ է տալիս միասին վերահսկել սուլթանի խոստացած վերանորոգումների իրական գործադրութեանը»։

—

Ռուսաց կառավարութիւնը չնորհաւորել է ֆրանսիական կառավարութեանը իւր Մադագասկարում տարած յաղթութեան համար։

—

Վերջին ժամանակներս Սիցիլիայից խիստ երկիւղալի լուրեր են հասնում։ Բնակիչների մէջ մոքերի սպառնալից յուզումն է սկսում։ Իտալական կառավարութիւնը մտադիր է վերացնել վնասուրական վերահսկողութիւնն այդ կողմում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ։

—

ՎԼԱԴԻՎԱՍՏՈՒԿ, 12 հոկտեմբերի.—Խաղաղական ովկիանոսի միացեալ նաւախմբերը մօտաւորապէս հոկտ. 15-ին մեկնում են Ճապոնիա։ Իրերի դրութիւնը Քորէայում երկիւղ է ազդում։ Քորէայի թագաւորի հայրը, որին ճապոնացիները կաչառել են, բացարձակապէս անցել է նրանց կողմը։ Մահմետականների յուզումները Կանսուում, Զինաստանում, աճում են։ Կառավարչական զօրքերի դրութիւնը կրիտիկական է. 60,000 հոգուց բաղկացած զօրաբանակը ստիպուած է դիմագրել 800,000 լաւ զինուորուած ապստամբներին։ Իսկոհամայում խոստովանւում են, որ Սէուլի ճապոնական դեսպանութիւնը յանցաւոր է անկարգութիւնների մէջ, նա գործել է իւր նախաձեռնութեամբ։ Ճապոնական կառավարութիւնը անկեղծօրէն ցանկանում է Քորէայում պահպանել կարգը և պաշտպանել միւս պետութիւնների չահերը։ Մեծ չարժում է նկատւում Ճապոնիայում դէպի Ռուսիան. այնտեղ հաւատացած են, որ Ճապոնիայի միակ բարօրութիւնը կայանում է Ռուսիայի հետ բարեկամանալու և դաշնակցելու մէջ։

ՊԱՐԻԶ.—Տօնւում է ֆրանսիական ճեմարանների հարիւրամեայ յօբելեանը։

ՍՈՖԻԱ, 13 հոկտեմբերի.—«Մակեդոնական Գլաս» թերթը հաղորդում է, որ 70 ապստամբներ այրել են Թրքական կատրինցու գիւղ։ Մի ընդհարում է տեղի ունեցել Թրքական զօրքերի հետ։ Թուրքերի չարքից պակասել է 25 հոգի։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ընդլայնուած երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթում առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Պոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 . Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 2-ին 25 ր.։

Պոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 . և Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Յանծակ դուրս է գնում երեկոյեան 5 ժ. 27 ր., հասնում Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Թիֆլիսից Բորժոմ դուրս է գնում ցերեկուայ 3 ժամին և հասնում է Բորժոմ երեկոյեան 8 ժամին և 35 ր.։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Բորժոմից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ 1 ժ. և 25 ր. Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժամին և 15 րոպէին։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Մինջալովից Սուրամ դուրս է գալիս երեկոյեան 7 ժ. և 30 ր.։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեորում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց պիչերկու հասնում է Թիֆլիս հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն ձեռնարկել եմ իտալացի գրող ՍԻԼՎԻՕ ՊԵԼԼԻԿՈՅԻ **ՄԱՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ** հեղինակութեան թարգմանութեան։

ԱՐՇԱԿ ԵՊԻՓԱՐԵԱՆ։

3—3.

Թիֆլիսի Կեդրոնական, Զ. Գրիգորեանի և Ն. Խդգեկիէլի գրավաճառանոցներում վաճառւում է գնդապետ ԼԱԶԱՐԵԱՆԻ 7 գլխից բաղկացած

„ՊՐԻՉԻՆԻ

ճեդստвій Армянъ въ Турціи и отвѣтственность за

РАЗОРЕНІЕ САСУНА

Գինը՝ բրոշիւրը 40 կ.։

(702) 4—4.



Фабрика піанино А. КОППЪ
(Михайловская, № 132-й).

Продаются піанино изъ лучшихъ мѣстныхъ и заграничныхъ матеріаловъ на металлическихъ доскахъ съ перекрестными струнами. Отпускъ піанино на прокатъ. Пріемъ инструментовъ въ починку.

(367) 50—7

Պատիւ ունիմ յայտնելու Կովկասի պ. պ. վաճառականներին, որ ես լինելով մշտապէս **ՎԱՐՉԱՒԱՒՈՐ**, յանձն եմ առնում և կատարում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, ևս առաւել կը շուեղէն տպրանքներ առնելում (որի հետ ես լաւ ծանօթ եմ) և նոյնպէս կարած ոտնամաններ գնելում։

Իմ հասցէս՝ Варшава, Переѣздъ, домъ №9 Товмасъ Яргулянцъ.

(703) 12—5

Օրհոդ **Մ. Յ. ԱՍԼԱՄԱԶԵԱՆԻ** (կանանց բարձրագոյն կուրսերն աւարտած)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Տեղափոխուած է Կաֆեդրալնայա փողոց տուն № 14.

Ընդունում են երկու սեռից աշակերտներ առաջին, երկրորդ և երրորդ դասարանական բաժանմունքները, որտեղից ընդունում են միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները։

(366) 7—6

ՍՏԱՑՈՒԱԾ Է Կ. ՊՈԼՍԻՑ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ Է

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

(ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ)

ԻՍԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԶԱՆԱԶԱՆ ԴԻՐՔԵՐՈՎ

Գինը 40 կ. մինչև 1 ր. 50 կոպէկ

Դիմել՝ Тифлисъ — мѣняйл. Подъ гост. Кавказъ, магазинъ Теръ Осепіанцъ. Որովհետև Թիֆլիսի մի լուսանկար արտանկարել է այդ պատկերից, ուստի գնողների ուշադրութիւնը դարձնում ենք խնկականի վրայ, որի տակը գրուած է ֆրանսերէն՝ CONTADZIAN CONSTANTINOPLE

(704) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

վարչութիւնը սրանով յայտարարում է, որ իւր բնակարանում, Երևանի հրապարակի վրայ, Տէր-Աստուածատրեանի նախկին տանը, այն 1895 թուի հոկտեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին աճուրդով պիտի նորոգ վաճառելու համար ազատ գներով կալուածքներ, որոնք պատկանում են հետևեալ անձերին.

1) *Իզմայիլ Էֆգ Ամիդ Բէկովիչ Շիլեանսկուն*—մի հողաբաժին, որ ունի քսանևմէկ ու կէս քառ. սաժ. նրա վրայ կառուցուած երեք յարկանի տնով, որ գտնւում է Թիֆլիսի քաղաքի 5-րդ մասում Ծամբնայա փողոցում, ընդ № 11.

2) *Վասիլ Սեմեոնովիչ Մաթուզովին*—մի հողաբաժին եօթանասուն ու ինն քառ. սաժ. իւր վրայ կառուցուած մի յարկանի տնով, որ ունի և նեբքնատուն (խանութ) և գտնւում է Թիֆլիս քաղաքի 7 մասում, Լազարևսկայա փողոցում և

3) *Բ զրատ Եզորովիչ Նարայովին*—երկու հողաբաժին նրանց վրայ կառուցուած բոլոր շինութիւններով, որոնցից մէկը եօթանասուն վեց ու կէս քառ. սաժ., միւսը հարիւր վաճառուն քառ. սաժ. կամ ինչքան որ կերևայ իսկապէս. գտնւում է Թիֆլիս քաղաքի 5-րդ մասում, երկու նրբափողոցներում, որոնք տանում են դէպի Բեթղեհէմի փողոցը։

Վերոյիշեալ կալուածների աճուրդը կըսկսուի այն ցուցմունքից, որ կառաջարկեն նրանց գնել ցանկացողները. աճուրդի հաստատումը կախուած կըլինի Ընկերութեան Վարչութենից և Վերահսկիչ Մասնաժողովի միացեալ ատեանների հայեցողութիւնից։

(370) 3—1

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET CIE

ՆԱՒԱՊՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ, երկու չարաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ դնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։

Բաթումից գալիս է գալիս չորեքչաբթի, հոկտեմբերի 18-ին (30-ին) «Մինգրելիա» չոգնաւը, նաւապետ՝ Ժիբուէն։

Բաթումից Պարիզ հաղորդակցութեան ամսաթուները սովորական ղիջումն ունին։

Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները տանելու համար դիմել

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաւահրժեայա։

Թիֆլիսում—պ. ԲԱԲԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Դէպի ապ. Բաքում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալիբեակինսկայա հրապարակ։

Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ԻՆՆՈՅԻՆ։

(356) 20—11

Тифлисъ Доз. Цензурою 13-го Октября 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Мелико-Шахназаріанца. Воронц. Набережн. Церковный домъ